Կապանի «Նորոգշին» ՍՊ ընկերության կողմից նախատեսվող Բարգուշատի անդեզիտների հանքերևակումում օգտակար հանածոների արդյունահանման նպատակով երկրաբանական ուսումնասիրության աշխատանքների շրջակա միջավայրի

վրա ազդեցության գնահատման նախնական հայտի վերաբերյալ

1-ին հանրային քննարկման

Ա Ր Ձ Ա Ն Ա Գ Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն

27.11.2024թ. **ք. Կապան**

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՕ-150-Ն օրենքի և ՀՀ կառավարության 2023 թվականի դեկտեմբերի 28-ի N 2343-Ն որոշման հավելվածի /այսուհետ՝ Հավելված/ սահմանված կարգով՝ որպես ազդակիր համայնք ՀՀ Սյունիքի մարզի Կապանի մշակույթի կենտրոնում / ՀՀ, Սյունիքի մարզ, Կապան, Չարենց 1 շենք/ 2024 թվականի նոյեմբերի 22-ին, ժամը 12:00-ին տեղի ունեցավ Կապանի «Նորոգշին» ՍՊ ընկերության կողմից նախատեսվող Բարգուշատի անդեզիտների հանքերևակումում օգտակար հանածոների արդյունահանման նպատակով երկրաբանական ուսումնասիրության աշխատանքների շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման նախնական հայտի վերաբերյալ 1-ին հանրային քննարկումը:

Քննարկմանը ներկա էին Կապանի «Նորոգշին» ՍՊ ընկերության և համայնքապետարանի աշխատատակիցներ:

Հանրային քննարկման մասնակիցների անհատական կազմը կցվում է սույն արձանագրությանը:

Հանրային քննարկումը վարեց Կապան համայնքի ղեկավարի 1-ին տեղակալ՝ Գոռ Թադևոսյանը: Նա ողջունեց ներկաներին, ներկայացրեց օրակարգը: Որպես ծանոթություն հիշեցրեց, որ հանրային քննարկման վերաբերյալ կարելի էր ծանոթանալ «Առավոտ» օրաթերթի 2024 թվականի հոկտեմբերի 24-ի թիվ 183/7184 համարում, Կապանի համայնքապետարանի պաշտոնական կայքի (www.kapan.am) հայտարարություններ բաժնում:

Համաձայն ՀՀ կառավարության 28.12.2023թ. N2343-Ն որոշման 21-րդ կետի՝ վերը նշված հանրային քննարկման վերաբերյալ Ձեր առաջարկությունները, դիտողությունները և կարծիքները կարող եք ներկայացնել ծանուցումից հետո 20 աշխատանքային օրվա ընթացքում: Հանրային քննարկման վերաբերյալ դիտողություններ կամ առաջարկություններ մինչ այսօր չեն ստացվել:

Ձեկույցի համար խոսքը փոխանցվեց Կապանի «Նորոգշին» ՍՊ ընկերության լիազորված անձ՝ Սաթենիկ Գևորգյանին:

Ձեկույց (Սաթենիկ Գևորգյան) - Շնորհակալություն պարոն Թադևոսյան: Այսօր փորձենք համառոտ ներկայացնել երկրաբանահետախուզական աշխատանքների վերաբերյալ տվյալներ: Եվ այսօրվա հանրային քննարկման արդյունքում՝ համայնքի նախնական համաձայնությունը ստանալուց հետո ընկերության կողմից կկազմվի ամբողջ ծավալների վերաբերյալ ծրագիր, ինչպես նաև շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտ և այդ ամբողջ փաթեթները կուղարկենք Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների, ինչպես նաև Շրջակա միջավայրի նախարարություններ՝ փորձաքննության, որից հետո արդեն դրական պատասխան ստանալուց հետո՝ երկրորդ հանրային լսմանը, կներկայացնենք ամբողջական ծավալով: Ինչպես արդեն նշվեց Կապանի «Նորոգշին» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունը նախատեսում է Բարգուշատի անդեզիտների երևակման տեղամասում իրականացնել երկրաբանահետախուզական աշխատանքներ՝ հետագայում օգտակար հանածոների արդյունահանման նպատակով: Տեղամասը վարչականորեն գտնվում է Կապան համայնքի Արծվանիկ բնակավայրում: Եվ մեր տեղամասը, որտեղ ցանկանում ենք իրականացնել երկրաբանահետախուզական աշխատանքներ, զբաղեցնում է մոտ 25 հա տարածք: Երկրաբանահետախուզական աշխատանքներն ամբողջությամբ իրականացնելու են ընկերության ֆինանսական միջոցների հաշվին: Աշխատանքներն իրականացվելու են հետևյալ կարգով՝ ունենալու ենք հորատման աշխատանքներ: Բնականաբար՝ մինչ հորատում կատարելը, կառուցելու ենք հորատահարթակներ: Հորատումը կատարելու ենք 8-ից մինչև 75մ խորությամբ՝ 7 հորատանցքեր: Ուստի կառուցելու ենք 7 հորատահարթակներ՝ անմիջապես կողքին, որի վրա կտեղադրվեն հորատման սարքերը: Մաքրվածքների անցում ենք կատարելու 5մ երկարությամբ, 3 մ միջին լայնությամբ և մինչև 4 մ բարձրությամբ: Եվ ունենալու ենք երեք

մերկացումներ: Փորձեմ ավելի պարզ արտահայտվել: Մերկացումները դրանք այն են, ինչ արդեն բնության կողմից ունենք: Այդ ապարները մերկ տեսակով արդեն կան և որոնք հետազոտելու ենք: Իսկ մաքրվածքների դեպքում արդեն հողը վերցնելու ենք ու մաքրելու ենք, ապարը ամբողջությամբ մերկացնելու ենք: Նշեմ, որ այդ բոլոր աշխատանքները կատարելուց հետո մոտավոր 54 նմուշ ենք վերցնելու, որոնք ուղարկելու ենք լիցենզավորված «Անալիտիկ» ՓԲԸ լաբորատորիա հետազոտությունների, որպեսզի ուսումնասիրենք նրանց ֆիզիկոմեխանիկական կազմը, քիմիական կազմը, ինչպես նաև պետրոգրաֆիական կազմում ենք որոշելու: Աշխատանքներն իրականացնելուց առաջ ասեմ, որ գոյություն ունեն ճանապարհներ և կառուցելու ենք նոր ճանապարհներ, բնականաբար՝ այդ աշխատանքները կատարելու համար: Ինչպես նշեցի հորատումներ ենք կատարելու, մաքրվածքներ և այդ բոլոր աշխատանքները կատարելուց առաջ հողի վերին շերտը վերցնելու ենք և հատուկ պահպանելու ենք այդ տարածքներից որոշակի մասում, հետագայում հողի ռեկուլտիվացիա կատարելու համար: Աշխատանքներն ավարտելուց հետո այն հետ ենք փռելու և փխրեցնելու ենք, որպեսզի բուսական աշխարհն ավելի արագորեն վերարտադրվի և բնականոն տեսք ունենա: Տվյալ տարածքում նշեմ, որ բուսական և կենդանական աշխարհից Կարմիր գրքում գրանցված ոչ մի տեսակ չունենք: Մթնոլորտային օդի վրա աղտոտվածության աստիճանը կլինի նորմատիվներով սահմանված թույլատրելի սահմաններում: Դրա համար այդ տարածքներում աշխատող տեխնիկան և սարքավորումները կլինեն ամբողջությամբ սարքին վիճակում: Տեխնիկան կլիցքավորվի լիցքավորման կայաններում, դրանով իսկ մենք կբացառենք նավթամթերքի կուտակումը այդ տարածքներում: Ջրային ավազանների աղտոտում չի իրականացվի, քանի որ առանձնապես ջրային արտահոսքեր մենք չենք նախատեսում: Ինչպես նաև նշեմ, որ տեխնիկան և սարքավորումները կունենան օդ արտանետվող թունավոր նյութերի չեզոքացուցիչներ և ձայնախլացուցիչներ: Եվ այսքանով կարող եմ նշել, որ նաև բնապահպանական միջոցառումների համար մենք նախատեսում ենք մասհանել տարեկան 150 հազար դրամ: Այսքանը պարոն Թադևոսյան: Եթե կան այլ հարցեր կարող ենք պատասխանել, իսկ ավելի մանրամասն, ինչպես ասացի արդեն երկրորդ լսման ժամանակ:

Հարց (Գոռ Թադևոսյան)– Շնորհակալություն: Կա՞ն հարցեր: Ես մի հարց ունեմ՝ տեղամասը բնակավայրերի բնակելի տներից կամ այլ հասարակական նշանակության շենքերից ինչքա՞ն հեռավորության վրա է:

Պատասխան (Գրիգորի Փարսյան)- Մոտավոր 5 կմ հեռավորություն ունի հարակից բնակավայրերից, եթե ոչ ավելին:

Ամփոփում (Գոռ Թադևոսյան)- Շատ լավ: Այլ հարցե՞ր: Շնորհակալություն հանրային քննարկման մասնակիցներին:

<u>Հանրային քննարկման վարող՝</u>

Կապան համայնքի ղեկավարի 1-ին տեղակալ **Գոռ Թադևոսյան**

<u>Նախաձեռնող՝</u>

Կապանի «Նորոգշին» ՍՊԸ տնօրեն **Գրիգորի Փարսյան**